ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

17.05.2021 թ. կնքված թիվ ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/02 անվտանգության ապահովման ծառայությունների մատուցման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին

ք. Երևան 04.08. 2021թ.

Կադաստրի կոմիտեն (այսուհետ՝ կոմիտե), ի դեմս գլխավոր քարտուղարի ժ/պ՝ Գ. Եգանյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ պատվիրատու), մի կողմից և «Սեկոնետ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Տ. Մելիքյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2021 թվականի մայիսի 17-ին կնքված անվտանգության ապահովման ծառայությունների մատուցման թիվ ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/02 պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) 3.3 և 8.15 կետերով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Հիմք ընդունելով պայմանագրի 3.3 և 8.15 կետերով սահմանված պահանջները՝ հաստատել պայմանագրի 1.1 կետով նախատեսված՝ անվտանգության ապահովման ծառայությունների մատուցման վճարման ժամանակացույցը՝ համաձայն հավելվածի:

1.2 Ծառայության մատուցման դիմաց վճարումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության (պայմանագրի թիվ 2 հավելված) հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով հաստատված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, սակայն ոչ ուշ, քան 2021թ.-ի դեկտեմբերի 25-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հաշվառման պահից, գործում է մինչև կողմերի կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների կատարման ավարտը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն համաձայնագրի հավելվածը կազմված է 1 էջից և համարվում է համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Կադաստրի կոմիտե	«Սեկոնետ»ՍՊԸ
ք. Երևան, Արշակունյաց 7	ք. Երևան, Ն. Զարյան 32
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն	«Հայբիզնեսբանկ»ՓԲԸ
Հ/Հ 900011030815	Հ/Հ 1150004088520100
ՀՎՀՀ 02534328	ՀՎՀՀ 00099207
Գլխավոր քարտուղարի ժ/պ՝ Գ. Եգանյան	Տնօրեն՝ Տ. Մելիքյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 2
ԿԿ-ԷԱՃԾՁԲ-21/02 ծածկագրով համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**					
			օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	98111121/505	անվտանգության ապահովման ծառայությունների	7425000	7425000	7425000	7425000	7425000	**7425000**

ԳՆՈՐԴ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր քարտուղարի ժ/պ՝ Գ. Եգանյան

/ստորագրություն/
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ

«Սեկոնետ»ՍՊԸ
ք. Երևան, Ն. Զարյան 32
«Հայբիզնեսբանկ»ՓԲԸ
Հ/Հ 1150004088520100
ՀՎՀՀ 00099207

Տնօրեն՝ Տ. Մելիքյան

/ստորագրություն/
Կ.Տ.